Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

- պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
- ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

- **Share** — copy and redistribute the material in any medium or format
- **Adapt** — remix, transform, and build upon the material

-414-

# ՍՏՈՐԻՆ ԿՈՒՍՈՐԳԱՆՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(ՀԱՄ. Կ. (Բ) Կ. ԱՆԴՐՑԵՐԿՈՄԻ ԴԻՄՈՒՄԸ)

ԿՈՒՍՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

-414-
329.15(47.92)
22 DEC 2017

# ՍՏՈՐԻՆ ԿՈՒՍՕՐԳԱՆՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(ՀԱՄ. Կ. (Բ) Կ. ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ԴԻՄՈՒՄԸ)

ԿՈՒՍՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

1-3391/գր

Տեխն. խմբագիր՝ Մ. Եփրիկ.
Սրբագրիչ՝ Ա. Տեր-Մկրտչյան
Հանձնված ե արտադրության 1932 թ. 9 դեկտեմբերի
Ստորագրված ե տպագրելու 1932 թ. 13 դեկտեմբերի.
Տիրաժ 3000. Հրատ. № 64. 27,000 տպ. նշ.

Պետհրատի տպարան   Պատվեր № 3659   Գլավլիտ № 7698 (բ)

# ՍՏՈՐԻՆ ԿՈՒՍՈՐԳԱՆՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

## ՀԱՄ. Կ. (Բ) Կ. ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ ԴԻՄՈՒՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՈՐ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՅԵՎ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ

Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունները ձեռնամուխ են լինում ստորին կուսորգանների հերթական վերընտրություններին: Այդ կարևորագույն քաղաքական կամպանիան անց ե կենում այնպիսի ժամանակաշրջանում, յերբ Խորհրդային Միության բանվոր դասակարգը և աշխատավորական մասսաները, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, հաղթականորեն ավարտելով առաջին հնգամյակի չորրորդ տարին, թևակոխում են յերկրորդ հնգամյակը, անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցման հնգամյակը:

Ավարտելով սոցիալիստական եկոնոմիկայի ֆունդամենտի կառուցումը, Խորհրդային Միությունը վերջնականապես հաստատվեց սոցիալիստական ուղու վրա:

Խորհրդային Միությունն աշխարհում առաջին տեղն ե գրավել տրակտորների և գյուղատնտեսական մեքենաների արտադրության տեսակետից, յերկրորդ տեղն ամբողջ աշխարհում և առաջին տեղը Յեվրոպայում՝ չուգունի ձուլման, նավթի հանույթի և ընդհանուր մեքենաշինության գծով:

Մենք սովորել ենք կառուցել ամենաբարդ մեքենաներ, մենք ստեղծել ենք արդյունաբերության միան-

պամայն նոր ճյուղեր և ավելի ու ավելի ազատագրում ենք մեր երկիրը կապիտալիստական երկրների տեխնիկական-տնտեսական կախումից։

15 միլիոն գյուղացիական տնտեսություններ, այսինքն՝ Միության բոլոր տնտեսությունների 60 տոկոսից ավելին, մտել են կոլտնտեսությունները և կազմում են հանրայնացված խոշոր սոցիալիստական տնտեսություն։ Համատարած կոլեկտիվացման հիման վրա, կուլակությունը, որպես դասակարգ, լիկվիդացիայի է ենթարկվում։

Անշեղորեն բարձրանում է ԽՍՀՄ բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների նյութական-կուլտուրական մակարդակը։

Սոցիալիստական շինարարության բոլոր ֆրոնտներում այդ մեծագույն հաջողությունները կուսակցությունը ձեռք է բերել ջախջախելով հակահեղափոխական տրոցկիզմը, անշեղորեն կիրառելով գլխավոր գիծն աջ և «ձախ» օպորտունիզմի և կուսակցության լենինյան գծից շեղված թեքումների հանդեպ հաշտվողականություն ցույց տալու դեմ մղվող պայքարում։ Կուսակցությունն այդ հաջողությունները ձեռք է բերել շնորհիվ իր լենինյան շտաբի—ՀամԿ (բ) Կ Կենտկոմի փորձված և ամուր ղեկավարության՝ գլխավորությամբ միջազգային բանվոր դասակարգի առաջնորդ ընկ. Ստալինի։

Խորհրդային Անդրկովկասը, որը Խորհրդային մեծ Միության անքակտելի մասն է, առաջին հնգամյակն ավարտում է արտադրողական ուժերի բուռն աճումով, Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի բոլոր ժողովուրդների՝ ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի ծաղկմամբ։ Անդրկովկասը դառնում է ինդուստրիալ-ագրարային երկրամաս, թանգարժեք տեխնիկական և մասնագիտական կուլտուրաների ռայոն։



Հնգամյակի առաջին տարվա համեմատությամբ Անդրկովկասի ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքը 1932 թվին աճել է համարյա երկու անգամ. Բաքվի բանվորների հերոսական ջանքերով նավթի հնգամյակը կատարված է 2½ տարում։

Անդրկովկասի գյուղացիական բոլոր տնտեսությունների 40 տոկոսից ավելին մտել է կոլտնտեսությունները, որոնք կուլակության դեմ մղվող անողոք պայքարում քաղաքականապես և կազմակերպչորեն տնտեսապես ամրապնդվում են։

Անդրյերկոմի և անդրկովկասյան հանրապետությունների կուսկազմակերպությունների կենտկոմների ղեկուցումների առթիվ ՀամԿ (բ) Կ Կենտկոմի 1931 թվի հոկտեմբերի 31-ի որոշման հիման վրա ուղղվում են անցյալում թույլ տրված սխալները գյուղացիության քաղաքական ղեկավարության գործում, ծավալվում են հանրապետությունների տնտեսական նախաձեռնությունը, ինքնուրույնությունը, այդ հիման վրա ամրապնդելով Անդրֆեդերացիան։ Անդրկովկասի կուսկազմակերպությունները, Բաքվի կազմակերպության ղեկավարությամբ, ջախջախեցին անսկզբունք ատամանշչինան և խմբակայնությունը, ամրապնդելով իրենց շարքերը և համախմբելով ՀամԿ (բ) Կ Անդրյերկոմի բոլշևիկյան ղեկավարության շուրջը։

Դրա հետ միասին ՀամԿ (բ) Կ Կենտկոմի հոկտեմբերի 31-ի որոշմամբ առաջադրված խնդիրներն այսօր էլ ամբողջ հասակով կանգնած են Անդրկովկասյան կուսկազմակերպությունների առաջ.

նավթի հանույթի և վերամշակման ամեն կերպ զարգացումն Ադրբեջանում, նավթային արդյունաբերության ծավալման արագացումը Վրաստանում.

լեռնարդյունահանող արդյունաբերության (քարածուխ, պղինձ, ալյումին և այլն) ծավալումը.

հզոր մետալուրգիական գործարանի կառուցումը Դաշքեսանի հանքարանում.

տեխնիկական և մասնագիտական կուլտուրաների զարգացման հիման վրա տեքստիլ և սննդարդյունաբերության ընդլայնումը.

յերկրի ելեկտրիֆիկացման ծավալումը. կոլտնտեսությունների հետագա կազմակերպական-տնտեսական և քաղաքական ամրապնդումը.

յերկրորդ հնգամյակում Անդրկովկասը ԽՍՀՄ յերկրորդ հզոր բամբակագործական բազա դարձնելը.

յերկրորդ հնգամյակում Խորհրդային Միության թեյի սպառման բավարարումը հիմնականում. այս տեխնիկական-մասնագիտական կուլտուրաների (ծխախոտ, խաղող, մետաքս, ցիտրուսներ և այլն) հետագա մուծումը.

յերկրամասի ջրտնտեսության բարելավումը.

կուրորտային շինարարության գործում հարստագույն հնարավորությունների օգտագործումը.

քաղաքային տնտեսության, առաջին հերթին պրոլետարական կենտրոնների, բարելավումը և ռեկոնստրուկցիան.

մասսաների կուլտուրական մակարդակի հետագա բարձրացումը (պարտուսման, անգրագիտության վերացման, առողջապահության, դպրոցների, ակումբների, խրճիթ-ընթերցարանների աշխատանքների բարելավումը և այլն):



ՀամԿ (բ) Կ Կենտկոմի 1931 թվի հոկտեմբերի 31-ի վորոշմամբ նշված այդ տնտեսական-քաղաքական հիմնական խնդիրների լուծումը պահանջում է Անդրկովկասի կուսկազմակերպությունների բոլոր ուժերի մոբիլիզացիան և բոլշևիկյան համախմբվածությունը, պահանջում է լենինյան ազգային քաղաքականության ճիշտ կիրառումը, հանրապետությունների տնտեսական նախաձեռնության և ինքնուրույնության լայն ծավալման հիման վրա Անդրկովկասյան Ֆեդերացիայի հետագա ամրապնդումը:

Այդ խնդիրներն Անդրկովկասի կուսկազմակերպությունների կողմից կարող են լուծվել միմիայն դասակարգային զգոնության հետագա ուժեղացման և կուսակցական շարքերի գաղափարական - քաղաքական մարտունակության բարձրացման պայմաններում:

Անհրաժեշտ է հիշել, վոր

«...Դեռ հառաջայումն էլ անխուսափելի յեն դասակարգային պայքարի սրումը առանձին մոմենտներում և առանձնապես սոցիալիզմի կառուցման առանձին ռայոններում և առանձին բնագավառներում» (XV կուսկոնֆերանս):

Դասակարգային թշնամին, կուլակության մնացորդները, հակախորհրդային կուսակցությունների՝ դաշնակների, մուսավաթիստների, մենշևիկների, տրոցկիստների վողորմելի բեկորներն ակտիվորեն պայքարում են կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդման դեմ, գործելով տերրորի, սպառնալիքների, պրովոկացիաների միջոցով, ագիտացիա մղելով յեկամուտների հավասար բաշխման համար, կոլտնտեսությունների կողմից պրոլետարական պետության հանդեպ պարտավորությունների կատար-

ժան դեմ, կոլտնտեսային առևտրի դեմ, փորձում են քայքայել, ներսից պայթեցնել կոլտնտեսությունները։

Դասակարգային թշնամին ակտիվորեն պայքարում է բամբակի, թեյի, ծխախոտի և այլ տեխնիկական ու մասնագիտական կուլտուրաների մուծման դեմ, ընդդիմադրում է Անդրկովկասի գյուղատնտեսության մեջ թագնված վիթխարի հնարավորությունների օգտագործմանը։

Դասակարգային թշնամին պայքարում է հասարակական սեփականության հափշտակման համար, ամեն միջոցի դիմում է, փորձելով բանվոր դասակարգի և կոլտնտեսականների հետամնաց խավերի մեջ պոկողական, խնամակալական տրամադրություններ հրահրի, դուրս է գալիս աշխատանքի սոցիալիստական մեթոդների դեմ։

Դասակարգային թշնամին պայքարում է Անդրկովկասի բազմազգի ժողովուրդների համերաշխության և համախմբվածության ազգային խաղաղության դեմ, փորձում է ազգային թշնամանք հրահրել։

Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունները, գլխավորելով աշխատավոր մասսաների աճող քաղաքական ակտիվությունը, պետք է մերկացնեն և խորտակեն դասակարգային թշնամու, կուսակցության մեջ նրա գործակալության—աջ և «ձախ» օպորտունիստների, բանվոր դասակարգի և կոլտնտեսական գյուղացիության ներսում նրա գործակիցների—գործալքի և չվողի, գողի, լոդրի և յենթակուլակի դիմադրությունը։

ՀամԿ (բ) Կ Կենտկոմի հոկտեմբերի 31-ի վորոշման հետագա կենսագործման պայքարն Անդրկովկասի կուսկազմակերպությունները պետք է մղեն XVII կուս-



կոնֆերանսի վորոշումների, Կենտկոմի սեպտեմբերյան պլենումի վորոշումների, ընկ. Ստալինի վեց պայմանների և մեր յերկրում սոցիալիստական շինարարության խնդիրների մասին կուսակցության վերջին դիրեկտիվների բոլշևիկյան իրագործման հիման վրա։

Խորհրդային Միությունը սոցիալիզմ է կառուցում կապիտալիստական շրջապատում։ Կապիտալիստական աշխարհն ընդգրկված է տնտեսական խստագույն ճգնաժամով և այդ ճգնաժամից յելք է վորոնում աշխարհում պրոլետարական դիկտատուրայի առաջին պետության դեմ՝ պատերազմի մեջ։ Պատրաստ լինել խորտակիչ հակահարված տալու իմպերիալիստների հարձակմանը խորհրդային յերկրի վրա, ամրապնդել Խորհրդային Միության պաշտպանունակությունը— ԽՍՀՄ յուրաքանչյուր կուսկազմակերպության, յուրաքանչյուր կոմունիստի, յուրաքանչյուր աշխատավորի առաջնագույն պարտականությունն է։

---

Անդրկովկասյան կուսկազմակերպությունների առաջ կանգնած այդ բոլոր խնդիրների կատարումը պահանջում է հետագա համառ աշխատանք՝ ամրապնդելու համար կուսկազմակերպության շարքերը, վերականգնելու և ծավալելու համար կազմակերպական, կուսդաստիարակչական և մասսայական – քաղաքական աշխատանքը։

Յուրաքանչյուր կուսկազմակերպություն, յուրաքանչյուր բջիջ պետք է այնպես կառուցի իր աշխատանքը, վորպեսզի իսկապես յերկրորդ հնգամյակում իր առաջ կանգնած խնդիրների բարձրությանը լինի, վորպեսզի մասսաների իսկական քաղաքական ղեկավարն ու կազմակերպիչը լինի՝ անդասակարգ սոցիալիստա-

կան հասարակության համար մղվող պայքարում։

Աշխատանքի ծանրության կենտրոնը փոխադրել ցեխ, բրիգադ, շախտ, ագրեգատ, հերթափոխություն, արտադրական բնագավառ.

Ճիշտ դասավորել կուսակցական ուժերը.

բարձրացնել յուրաքանչյուր կոմունիստի ավանգարդային դերն արտադրության մեջ և հասարակական-քաղաքական կյանքում:

ամրացնել կուսխմբակները և միջին կուսօղակը.

յուրաքանչյուր կոմունիստի ներգրավել կուսակցական աշխատանքի և մարքս-լենինյան ուսուցման մեջ.

յուրաքանչյուր բանվոր-աշխատավորի ընդգրկել կուսակցական ազդեցությամբ—

այդ ուղիով պիտի ընթանա Անդրկովկասի բոլոր կուսկազմակերպությունների ամրապնդումը, նրանց աշխատանքի վերակառուցումն ու ծավալումը:

Անդրկովկասի բոլոր կուսակցական կազմակերպությունների գլխավոր խնդիրն է համառորեն աշխատել կոմունիստների գաղափարական-քաղաքական մակարդակի հետագա բարձրացման համար՝ Մարքսի, Լենինի, Ստալինի հեղափոխական թեորիայի տիրապետման հիման վրա: Լուրջ ուշադրություն պետք է դարձնել կուսակցության թեկնածուական կազմին, ձգտելով յուրաքանչյուր թեկնածուին կայուն լենինյան դարձնելուն:

Կուսակցական կազմակերպությունները պետք է ապահովեն մասսաների դաստիարակությունը լենինյան կուսակցականության և անհաշտության ոգով կուսակցական գծից ամեն տեսակ թեքումների հանդեպ, միջազգային դասակարգային համերաշխության ո-



գով: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության, ընիկ ազգություններից և ազգային փոքրամասնություններից կադրեր դաստիարակելու աշխատանքի բարելավմանը, Անդրկովկասի ժողովուրդների ազգամիջյան խաղաղության հետագա ամրապնդմանը, լենինյան ազգային քաղաքականությունից սողոսկող թեքումների— մեծապետական շովինիզմի՝ որպես գլխավոր վտանգի, տեղական նացիոնալիզմի ու նրանց վերաբերմամբ հաշտվողականության դեմ պայքարն ուժեղացնելուն:

Առաջին հնգամյակն ավարտելու և երկրորդ հնգամյակը թևակոխելու շրջանում Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների առաջ դրված հսկայական խնդիրները չեն կարող լուծվել, առանց կուսակցությունից դեպի մասսաները տանող բոլոր շարժաբեր փոկերի ամրացման: Խորհուրդների, արհմիությունների, Կոմերիտմիության, կանանց պատգամավորական ժողովների և բոլոր կամավոր կազմակերպությունների աշխատանքները պետք է բարձրացվեն երկրորդ հնգամյակի խնդիրների մակարդակին, պետք է ուժեղանա այդ կազմակերպությունների դասակարգային մարտունակությունը, պետք է ե՛լ ավելի ամրանա նրանց կապն աշխատավորական լայն մասսաների հետ, պետք է բարձրանա նրանց դերը մասսաների սոցիալիստական դաստիարակության գործում:

Կուսակցական կազմակերպությունները հատուկ ուշադրություն պետք է հատկացնեն Կոմերիտմիությանը, որը կուսակցության ամենամոտիկ օգնականն է սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում և սոցիալիստական նոր կադրերի հզոր ռեզերվը:

Կուսակցական կազմակերպությունները բացառիկ հոգատարությամբ պետք է շրջապատեն պիոներական կազմակերպություններին, ոգնելով Կոմյերիտմիությանը՝ ամեն կերպ բարելավելու յերեխաների մեջ կատարվող դաստիարակչական աշխատանքը։

---

Կուսակցական ստորին որգանների վերընտրությունները պետք է մի նոր, բարձր աստիճանի հասցնեն Անդրկովկասի բոլոր կուսակցական կազմակերպությունների աշխատանքները, կուսակցության դիրեկտիվների կատարման սիստեմատիկ ստուգումների հիման վրա պետք է սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում բարելավեն կոնկրետ, ոպերատիվ կուսակցական ղեկավարության վորակը։

Արդյունաբերության կուսակցական կազմակերպությունները պետք է իրենց ուշադրության կենտրոնը դարձնեն հնգամյակի 4-րդ ավարտական տարվա արդֆինպլանների քանակական ու վորակական ցուցանիշների անպայման կատարման խնդիրը։ Բաքվի բոլշևիկները՝ գլխավորելով Բաքվի պրոլետարիատին, տիրապետելով նավթի հանույթի ու վերամշակման առաջավոր տեխնիկային, բարելավելով յուրաքանչյուր բուրովոյի, նավթահորի, նավթամուղ գործարանի աշխատանքը՝ պետք է կատարեն նավթի պլանը։ Յուրաքանչյուր գործարան, նավթահոր ու հանքահոր պետք է յերկրորդ հնգամյակը մտնի՝ լրիվ կատարած իր 1932 թվի պլանները։ Այդ խնդիրն իրականացնելու համար արդյունաբերության կուսակցական կազմակերպությունները պետք է անշեղորեն կատարեն ընկ. Ստալինի վեց պայմանները, պետք է մոբիլիզացիայի յենթարկեն



իրենց ձեռնարկությունների բոլոր ներքին ռեսուրսները, ավելի լայն ծավալեն արտադրության տեխնիկային տիրապետելու գործը, ճիշտ կազմակերպեն աշխատանքը, ամենայն խստությամբ պահպանեն միանձնյա ղեկավարության սկզբունքը, ամրացնեն տնտհաշվարկը և վերջնականապես արմատախիլ անեն դիմազրկությունն ու հավասարեցումը։

Արդյունաբերության կուսակցական կազմակերպությունները պետք է բանվորական լայն մասսաներին բացատրեն վոչ հարգելի պատճառով գործալքում կատարելու համար աշխատանքից հեռացնելու մասին կառավարության հրատարակած դեկրետի իմաստն ու նշանակությունը, մոբիլիզացիայի յենթարկեն մասսաներին՝ պայքարելու գործալքների, արտադրության մեջ գոյություն ունեցող մանր-բուրժուական թափթփվածության, բանուժի հոսունության դեմ, ձգտելով ամրացնել բանվորներին ձեռնարկությանը։ Արտադրությունից պետք է լրիվ վերացվեն բանուժի հոսունություն առաջացնող պատճառները։ Կուսակցական կազմակերպությունները պետք է ձեռնարկություններում սեփական մթերային բազաներ ստեղծելու և ամրացնելու, փակ-բանկոոպների և մատակարարման բաժինների աշխատանքը բարելավելու, բանվորական մատակարարման գործը կազմակերպելու համար, գործարանային վարչությունների պատասխանատվությունը բարձրացնելու, ինքնուրույն մթերումները լայնացնելու, լայն սպառման ապրանքների արտադրությունը ծավալելու և հասարակական սննդի վորակը բարելավելու հիման վրա՝ ձգտեն բանվորական մատակարարման հետագա բարելավմանը, վերացնելով հավասարեցումը վոչ միայն աշխատավարձի, այլև բանվորների մատա-

կարգման ու կենցաղային սպասարկման գործում:

Ձեռնարկությունների կուսբջիջները պետք է իրենց աշխատանքն այնպես կազմակերպեն, որ յուրաքանչյուր բանվորի ընդգրկեն կուսակցական-քաղաքական ազդեցությամբ, կուսակցության ու կառավարության բոլոր որոշումները հասցնեն նրան, ամրացնեն նրա մեջ այն գիտակցությունը, որ նա աշխատում է իր դասակարգի, սոցիալիզմի համար: Հենվելով բանվորների առաջավոր, որակյալ կադրերի վրա, արդյունաբերության կուսկազմակերպությունները պետք է ձգտեն է՛լ ավելի լայն ծավալել սոցմրցումն ու հարվածայնությունը:

Տրանսպորտի կուսակցական կազմակերպությունները վերընտրական կամպանիայի ընթացքում պետք է ձգտեն վճռական բեկում ստեղծել տրանսֆինպլանի բոլոր ցուցանիշների կատարման ասպարեզում, մանավորապես՝ անպայման կատարելու աշնան-ձմեռվա փոխադրումների խնդիրները:

Անդրկովկասի յերկաթուղին պետք է մտնի յերկրորդ հնգամյակը՝ վերացրած ամոթալի ճեղքվածքը: Անհրաժեշտ է վերջ տալ յերկաթուղային կազմակերպությունների աշխատանքում գոյություն ունեցող անպատասխանատվությանը, թափթփվածությանը, չփերթությանը, աշխատանքային կարգապահության խախտումներին:

Պայքարել առողջ շոգեքարշի, վագոնի ու ցիստեռնի և աշխատանքում նրանց լրիվ բեռնավորման համար, նրանց շրջանառությունն արագացնելու, դիմաղրկումը վերացնելու, զուգերթն ամրացնելու համար, պայքարել կանոնավոր ուղու համար, նորագույն տեխնիկային տիրապետելու համար, ելեկտրիֆիկա-



ցիայի և ինքնակառքի (ավտոբլոկիրովկայի) համար—բոլոր այս խնդիրները պետք է դառնան տրանսպորտի կուսկազմակերպությունների ուշադրության կենտրոնը: Կասպիի և Սև ծովի նավահանգիստների բոլշևիկները հաջողությամբ ավարտելով նավարկության պլանը, պետք է բոլշևիկորեն կազմակերպեն ձմեռվա նավանորոգումը:

Պայքար մղել բանուժի հոսունության, գործալքումների դեմ, բանմատակարարումն է՛լ ավելի բարելավելու, սեփական պարենային բազաներ ստեղծելու համար—այս խնդիրները տրանսպորտի կուսկազմակերպությունների առջև դրված են նույնպիսի ուժով և սրությամբ, ինչպես արդյունաբերության կուսկազմակերպությունների առջև:

Արդյունաբերության ու տրանսպորտի կուսկազմակերպություններն իրենց ամբողջ աշխատանքում պետք է հաստատապես հիշեն, որ նրանց խնդիրն է՝ ուժեղացնել պրոլետարական ներգործումը գյուղի վրա, ըստ ամենայնի ամրացնելով քաղաքային կազմակերպությունների շեֆությունն ու օգնությունը գյուղին, ամրացնելով քաղաքի և գյուղի արտադրական ու քաղաքական զոդման բոլոր ձևերը:

Սոցիալիստական շինարարության տվյալ ետապում Անդրկովկասի գյուղական կուսկազմակերպությունների առջև ծառացած են առանձնապես լուրջ և բարդ խնդիրներ:

Ուժեղացնել կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ու քաղաքական ամրացման աշխատանքը (յեկամուտների բաշխումն ըստ աշխօրերի, աշխատանքի և հաշվառման կազմակերպումը, կոլտնտեսությունների մաքրումը կուլակային տարրերից և այլն):

Երկիր, սահմանված ժամկետին առանց կորուստների հավաքել ամբողջ բամբակը, հանձնել գնման կայաններին ու գործարաններին, ապահովելով բամբակի հումքի բարձր որակը։

Ավարտել այն բոլոր աշխատանքները, որոնք նախատեսված են աշնան գյուղատնտեսական կամպանիայի պլանով, և ծավալել գարնան նախապատրաստությունները, նշանաբան ունենալով բերքատվության բարձրացման պայքարը։

Աշխատանք ծավալել սոցիալիստական անասնաբուծությունը բարձրացնելու համար։ Կազմակերպել անասունների ձմեռումը։

Ամեն կերպ խթանել գյուղատնտեսական արտադրանքի ապրանքային ցուցույթի աճումը՝ գյուղատնտեսական արտադրության հետագա վերելքի հիման վրա, ծավալելով կոլտնտեսային առևտուրը և արմատախիլ անելով վերավաճառողներին և սպեկուլյանտներին։

Համապատասխան կազմակերպական աշխատանք ծավալել, որ կոլտնտեսություններն ու անհատական տնտեսություններն անպայման կատարեն իրենց պարտավորությունները պրոլետարական պետության հանդեպ՝ հաց, միս և արդյունաբերական հումք և այլն հանձնելու (վաճառելու) ասպարեզում։

Ուժեղացնել պայքարը հանրային (սոցիալիստական) սեփականությունը պահպանելու համար, կոլտնտեսային գույքը վատնողների դեմ, հեղափոխական օրինականությունն ամրացնելու համար։

Այդ խնդիրներն իրականացնելու համար գյուղի կուսակցական կազմակերպությունները պետք է է՛լ ավելի բարձրացնեն իրենց դասակարգային մարտունա-



1-339/գր

կությունը, մաքրեն իրենց շարքերը դասակարգայնորեն խորթ և օպորտունիստական տարրերից, դառնան մասսաների իսկական կազմակերպիչներն ու քաղաքական ղեկավարները՝ կուլակության դեմ մղվող պայքարում, կուսակցության դիրեկտիվների բոլշևիկյան իրականացման համար մղվող պայքարում։

Գյուղական կուսկազմակերպությունները իրենց աշխատանքում պետք է հենվեն յուրաքանչյուր կուսբջիջի շուրջը կազմակերպված կոլտնտեսային ակտիվի վրա, որը ջոկվելու է կուսակցության ու խորհրդային իշխանությանն անվերապահորեն նվիրված կոլտնտեսային արտադրության հարվածայիններից։

Գյուղի կուսկազմակերպությունները պետք է վճռականորեն բարելավեն իրենց ստորին օղակների ղեկավարման մեթոդները, չերտավորելով իրենց ղեկավարությունը յուրաքանչյուր շրջանի, գյուղի և կոլտնտեսության քաղաքական, տնտեսական, ազգային, կուլտուր-կենցաղային և այլ առանձնահատկությունները հաշվի առնելու հիման վրա, հատուկ ուշադրություն նվիրելով ազգային փոքրամասնությունների, քոչվորների և աշխատավոր գեղջկուհիների մեջ կատարվող աշխատանքին։

Կոլտնտեսային գյուղական կուսբջիջները, ուժեղացնելով իրենց ուշադրությունը կոլտնտեսությունների հետագա կազմակերպական-տնտեսական ամրացման հարցերին, պետք է միջոցներ ձեռք առնեն, որ կազմակերպվի կոլտնտեսություններում յեկամուտների ճիշտ բաշխումը ըստ աշխօրերի, ըստ ամենայնի ամրացվեն մշտական արտադրական բրիգադները, ճիշտ բաշխվեն բոլոր [illegible]տնտեսային արտադրության մեջ, կոմունիստները [illegible] անմիջականորեն կոլ-

տնտեսային արտադրությանը, բարձրանա նրանց ավանգարդային դերը: Կոլտնտեսային և գյուղական կուսբջիջները չպետք է մոռանան, որ իրենք պարտավոր են սիստեմատիկ աշխատանք կատարել չքավորների մեջ, մասսայական լայն աշխատանք ծավալեն աշխատավոր մենատնտեսների՝ վաղվա այդ կոլտնտեսականների մեջ, բացատրելով նրանց խոշոր հանրայնացված տնտեսության հսկայական առավելությունները՝ կոլտնտեսային արտադրության օրինակներով: Կոլտնտեսային բջիջները պետք է վճռականորեն պայքար մղեն վարչարարության ու հրամայելու բոլոր արտահայտությունների դեմ, հետամուտ լինեն գյուղատնտեսական արտելի կանոնադրության ճիշտ իրականացմանը, միջոցներ ձեռք առնեն, որ յուրաքանչյուր կոլտնտեսական ունենա իր կովը և թռչունները, իր տնամերձ հողամասը:

Խորհտնտեսությունների և ՄՏԿ-ների կուսակցական բջիջներն իրենց ամբողջ աշխատանքում պետք է ըստ ամենայնի ամրացնեն խորհտնտեսություններն ու ՄՏ կայանները, միջոցներ ձեռք առնեն, որ յուրաքանչյուր խորհտնտեսություն, յուրաքանչյուր ՄՏԿ դառնա գյուղի սոցիալիստական վերակառուցման իսկական կազմակերպիչը: Ամրացնել մշտական կադրերը, ստեղծել դրա համար անհրաժեշտ բնակարանային, կենցաղային ու կուլտուրական պայմաններ, ճիշտ կազմակերպել աշխատանքը, օրինակելի հիմքերի վրա դնել տնտեսությունը, բարձր բերքատվության հասցնել խորհտնտեսական արտերը, պայքարել կանոնավոր և լրիվ բեռնվածությամբ աշխատող տրակտորի համար, —սրանք են այն խնդիրները, որոնք առաջին հերթին կանգնած են խորհտնտեսությունների ու ՄՏԿ-ների



բջիջների առաջ: Խորհտնտեսությունների ու ՄՏԿ-ների բջիջները պետք է դառնան գյուղում կատարվող կուսակցական աշխատանքի իսկական հենակետերը, ցույց տալով կուսաշխատանքի դրվածքի օրինակ, օգնություն ցույց տալով շրջակա գյուղական ու կոլտնտեսային կուսբջիջներին:

Կոոպերացիայի ու առևտրի օրգանների կուսակցական կազմակերպությունները իրենց աշխատանքի կարևորագույն խնդիրը պետք է համարեն՝ իրականացնել ՀամԿ (բ)Կ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումի որոշումները և կուսակցության՝ բանմատակարարման բարելավմանը և խորհրդային ու կոլտնտեսային առևտրի ծավալմանը վերաբերյալ վերջին որոշումները:

Կուսկազմակերպությունները պետք է անողոք հակահարված տան խորհրդային առևտրի «ձախ» հակալենինյան թերագնահատմանը և նրա ծավալման խնդիրների լիբերալ բուրժուական մեկնաբանությանը, որ տալիս են աջ օպորտունիստները:

Խորհրդային ու կոլտնտեսային առևտրի ծավալման ասպարեզում մեր ձեռք բերած նվաճումներն անբավարար են: Անհրաժեշտ է վճռականորեն հաղթահարել խորհրդային և կոլտնտեսային առևտրի ծավալման ասպարեզում դեռևս գոյություն ունեցող ինքնահոսի տրամադրությունները, ավելի լայն կազմակերպել մթերումները, մանավանդ հեռավոր վայրերում, արմատախիլ անել մասնավոր առևտրականին և վերավաճառող սպեկուլյանտին, ե՛լ ավելի զարգացնել լայն սպառման ապրանքների արտադրությունը, ծավալել տնայնագործական-արհեստագործական կոոպերացիայի աշխատանքը:

Մատուցական կոոպերացիան և պետառևտուրը պետք է ավելի արագորեն հասցնեն ապրանքները արտադրողից սպառողին, վոչնչացնեն բոլոր ավելորդ օղակները, կրճատեն վերադիր ծախսերը, անշեղորեն իրականացնելով գների խորհրդային քաղաքականությունը: Կոոպերացիան իր աշխատանքը պետք է կառուցի այնպես, վոր վերացնի հավասարեցումը՝ հարվածայինին ու գործավլիքին, արտադրության խանդավառ բանվորին ու գյուղին ապրանք մատակարարելու գործում: Մատակարարումը պետք է յենթարկված լինի արտադրության շահերին: Խանութների, կրպակների ու ճաշարանների առաջ գոյացող հերթերը, ճաշարանների ու խոհանոցների հակասանիտարական պայմանները, ճաշի վատ վորակը, այդ բոլոր թերությունները, վորոնց պատճառն է աշխատել չգիտենալը, պետք է վճռականորեն վերացնել:

Պետք է ամեն կերպ ուժեղացնել վատնումների, գողությունների, ինքնամատակարարման ու անպատասխանատվության դեմ մղվող պայքարը կոոպերացիայի ու պետառևտրի կազմակերպություններում:

Կոոպերատիվ կազմակերպությունները և բանմատակարարման ու հանրային սննդի բոլոր օղակները և որգանները պետք է ամրացնել կադրերով, լավագույն կոմունիստներով և կոմյերիտականներով: Կուսկազմակերպությունները պետք է հատուկ ուշադրություն նվիրեն ՀամԿ(բ)Կ կենտկոմի այն վորոշման կատարմանը, վորը պահանջում է վերացնել խոշոր ձեռնարկությունների բանվորական փակ բաշխիչները և բարձրացնել գործարանային վարչության պատասխանատվությունը բանմատակարարման գործում: Կուսկազմակերպությունները պետք է ամրացնեն և բարելավեն գյուղական սպառկոոպների աշխատանքը:



ԲՈՒՀ-երի և տեխնիկական ԲՈՒՀ-երի կուսկազմակերպությունները իրենց ուշադրության կենտրոնը պետք է դարձնեն այն պայքարը, վորը մղվում է կուսակցության ու կառավարության՝ ԲՈՒՀ-երի և տեխնիկական ԲՈՒՀ-երի վերաբերյալ վերջին վորոշումն իրականացնելու համար, պայքար մղեն գիտելիքները հաջողությամբ յուրացնելու համար, ուսման բարձր վորակի համար, արտադրական պրակտիկայի դրվածքը բարելավելու համար: ԲՈՒՀ-երի ու տեխնիկական ԲՈՒՀ-երի կուսկազմակերպությունները պետք է ամենախիստ կարգապահություն հաստատեն ուսումնական հաստատության մեջ, առաջին հերթին կոմունիստների ու կոմյերիտականների մեջ, ապահովելով կոմունիստների ու կոմյերիտականների ավանգարդային դերը ուսման բնագավառում: ԲՈՒՀ-երում ու տեխնիկական ԲՈՒՀ-րում կրթություն ստացած խորհրդային մասնագետը պետք է կանգնած լինի ժամանակակից գիտության ու տեխնիկայի, վիթխարի հարաճուն սոցիալիստական շինարարության պահանջների մակարդակի վրա:

Խորհրդային հիմնարկների կուսակցական կազմակերպությունները պետք է ե՛լ ավելի վճռականորեն բարելավեն խորհրդային ապարատի աշխատանքը, միջոցներ ձեռք առնեն, վոր նրանք արագորեն և ճիշտ կենսագործեն կուսակցության ու կառավարության բոլոր դիրեկտիվները, ստուգեն ընդունված վորոշումների կատարումը, մոտեցնեն խորհրդային ապարատն աշխատավոր մասսաներին: Այդ խնդիրները կարելի յե իրականացնել միմիայն այն դեպքում, յեթե ե՛լ ավելի պայքար ծավալվի խորհրդային ապարատի առանձին օղակնե-

րում գոյություն ունեցող բյուրոկրատիզմի տարրերի դեմ և աշխատավորների պահանջներին ու կարիքներին ցուցաբերվող անհոգի-չինովնիկական վերաբերմունքի դեմ։

Անհրաժեշտ է կրճատել մի շարք հիմնարկներում ուռճացած շտատները և էժանացնել ապարատը։

Խորհրդային հիմնարկների կուսակցական կազմակերպությունները պետք է ապահովեն կուսակցության հիմնական գծի ճիշտ կիրառումը ապարատի բոլոր օղակների կողմից, վճռականորեն պայքար մղեն այդ գծի աղճատումների ու խեղաթյուրումների դեմ, հակահարված տալով դասակարգային թշնամուն, որը փորձում է սողոսկել խորհրդային ապարատի մեջ՝ մեր շինարարությունը վիժեցնելու նպատակով։ Խորհրդային հիմնարկներում աշխատող կոմունիստները պետք է օրինակ հանդիսանան, թե ինչպես պետք է պայքարել բյուրոկրատիզմի դեմ, թե ինչպիսի ուշադիր և զգայուն վերաբերմունք պետք է ցուցաբերել յուրաքանչյուր աշխատավորի կարիքներին ու պահանջներին։

---

Կուսակցական օրգանների վերընտրությունները պետք է ամրացնեն քաղաքի և գյուղի բոլոր կուսակցական կազմակերպությունները։ Վերընտրությունների կարևորագույն եռապն է ինքնաստուգման աշխատանքը և հաշվետու կամպանիան։ Պետք է ուշի-ուշով ստուգվի, ուսումնասիրվի և քննարկվի յուրաքանչյուր բջիջի, յուրաքանչյուր խմբակային կազմակերպչի աշխատանքը՝ վերջինս էլ ավելի բարելավելու նպատակով։

Բաղկոմները, շրջկոմները և կուսկոմները կամպանիան անցկացնելիս պետք է ապահովեն յուրաքանչյուր բջիջի ինքնաստուգման աշխատանքի, հաշվետվությունների ու վերընտրությունների կոնկրետ օպերատիվ ղեկավարումը։

Հաշվետու վերընտրական կուսժողովները պետք է օրինակելի կերպով նախապատրաստված և կազմակերպված լինեն։ Յուրաքանչյուր կոմունիստ պետք է ակտիվ մասնակցություն ցույց տա իր կուսկազմակերպության հաշվետու-վերընտրական ժողովներին։

Հաշվետու – վերընտրական կամպանիան պետք է կարևորագույն դեր խաղա՝ է՛լ ավելի ամրացնելու կուսբջիջների կապը մասսաների հետ և նպաստելու կուսակցության հետագա աճմանը՝ սոցիալիստական շինարարության լավագույն հարվածայիններով և խանդավառ մարտիկներով։

Կուսօրգանների անդամ պետք է ընտրվեն լավագույն, ակտիվ, գործնական աշխատանքում ստուգված բայլշևիկներ։ Ամրացնելով կուսօրգաններին աշխատանքում իրենց արդարացրած ընկերներին, միևնույն ժամանակ անհրաժեշտ է առաջ քաշել կուսօրգաններում աշխատելու համար բանվորական կուսակցական ակտիվի նոր խավեր, մանավանդ ազգային կադրերից։

«Ամրացնել և սրել կուսակցական կազմակերպությունները, դուրս վռնդելով այդտեղից բյուրոկրատիզմի ու այլասերման տարրերը, մեկուսացնել և դուրս մղել կուսակցության լենինյան գծից կատարվող աջ և «ձախ» թեքումների արտահայտիչներին, առաջին պլանը քաշել իսկական կայուն լենինյաններին» (Ստալին)։

Սրանք են կուսակցական ստորին օրգանների վերընտրական կամպանիայի խնդիրները։

Այդ խնդիրները կարելի յե իրականացնել միմիայն այն դեպքում, յերբ վերընտրական կամպանիան նշանա-

քան ունենա ներկուսակցական դեմոկրատիայի և ինքնաքննադատության հետագա ծավալումը։

«Առանց ինքնաքննադատության չկա կուսակցության, դասակարգի, մասսաների ճիշտ դաստիարակություն, չկա բոլշևիզմ» (Ստալին)։

Բոլշևիկորեն վերակառուցելով յերկրորդ հնգամյակի վիթխարի խնդիրները լուծելու համար իրենց կատարած աշխատանքը, բարձրացնելով իրենց մարտունակությունը, զգոնությունը և անհաշտությունը դասակարգային թշնամու և նրա գործակալների դեմ մղվող պայքարում, պայքար մղելով կուսակցության գծից կատարվող թեքումների՝ աջ օպորտունիզմի դեմ, վորը մնում է վորպես գլխավոր վտանգ ներկա էտապում, «ձախ» խոտորումների դեմ, լենինյան ազգային քաղաքականությունից կատարվող թեքումների և նրանց հանդեպ ցուցաբերվող հաշտվողականության դեմ, Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունները իրենց առաջավոր ջոկատ՝ Բաքվի կազմակերպության հետ միասին, ՀամԿ (բ) Կ-ի լենինյան Կենտկոմի ղեկավարությամբ, կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի գլխավորությամբ կգլխավորեն մասսաների հարաճուն ակտիվությունը և կկազմակերպեն նրանց հետագա պայքարը՝ անդրկովկասյան սոցիալիստական հասարակություն կառուցելու համար։

ԳՐԱԴԱՐԱՆ



20

ՀՀ Ազգային գրադարան
NL0404569

ԳԻՆԸ 15 Կ.

1
3391

О перевыборах низовых парторганов.

Издательство ЦК КП(б)А
Партиздат 1932 Эривань